

ՎՃԱՆՈՒՄ ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ

Պոչխարիոյ համար	12 Ձր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	3 "
Մասնակցութեան համար	15 "
Վեցամսեայ	8 "

Ստեղծարարի համար	3 Ձր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	0.75 "

Մանկուցան սոյր աստի
 զին երեւիսն համար 40 ս.
 իսկ զերջին երեսն հա-
 մար 20 սանթիմէ ե. երե-
 րկն սանթիմէ կազմակեր-
 ման 20 Օ/Յ զեղյ կրչ

Վառակայի համար մի րի 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՒԻՆ. ԲԱՂՄԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՊՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՆԵՐԹԻ ԵՒ ՇՊԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկն
 կերպարներու նա-
 յերի

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie)

Մասնակցութեան համար
 մասի

՝ 20 ՍԱՆԹԻՄ ՝
 Պոչխարիոյ համար
 մասի
 ՝ 15 ՍԱՆԹԻՄ ՝

Գրութիւնք եւ յեն օրուք

ՎՃԱՆՈՒՄ ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԿՐՈՒՈՂԸ ԲԱՃՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՈՒՍՏԻՆՈՅ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ուսուսական ներքին գործերի նոր նախարար իշխան Միրսկին, որը, ըստ իր զանազան պարագաներում արած յայտարարութիւնների, բուսական ազատամիտ գաղափարներ ունի, այնքան ազատ որչափ հնար է ներկայ առասկան ռէժիմի հանդէպ. թէ հրէաների, թէ լեհացիների և թէ առաջադասարար համարված մասի ու երիտասարդութեան համար բուսական բարի տրամադրութիւններ յայտնեց. Ու այդ յայտարարութիւնները լոկ խօսք չը մնացին, որովհետեւ հրէաները նոր արտօնութիւններ ստացան, իսկ լեհացիների համար էլ վերջ տրվեց 96 թւականի օրէնքին, որով այդ վերջիններին լեհական մի քանի նահանգներում արգելվում էր հողեր և կալածներ գնել:

Ֆինլանդիայի մասին, ինչպէս յիշում են անցորդ հեռագրումս ընթերցողները, երբ Ֆրանսոյի թղթակիցը հարց էր տուել, նոյն Միրսկին պատասխանեց թէ ինքը չէ խառնվում այդ երկրի գործերին. իսկ կովկասահայերի մասին, որը նոյնպէս Միրսկու իշխանութեան տակ է գտնվում, Միրսկին ոչինչ չասաց. եթէ այդքի առաջ չունենանք նրա ընդհանուր խօսքերը. թէ որնքը հակառակ է կրօնական հալածանքների, որի մէջ լուսիւսայն կարծի է պարփակել և կովկասահայերի խնդիրը. սակայն առանց անձխտելի համոզումը ունենալու՝ թէ այդ ակնարկութիւնը վերաբերում է նաեւ հայերին:

Այս Միրսկին լուում է հայերի մասին. բայց կովկասի ժամանակաւոր կառավարիչ Թրէզէն չէ լուում:

Անցեալ օր հայրենիքի թղթակցութեան մէջ, որը արգէն ծանօթ է հեռագրումս ընթերցողներին, մէջ բերված էր այդ միջ-

գէի առած խօսքերը. հայերի վերաբերմամբ անգլիայի թղթակցիցներին. «այսուհետեւ աւելի խիստ պիտի լինենք գէպի հայերը և աւելի խիստ պիտի ստիպենք, որովհետեւ նրանք ըմբոստ հպատակներ են»:

Արգեօք մեծ սխալ չէ գործում Թրէզէն, իբրեւ քաղաքական մարդ, կարծելով թէ այդպիսով կարելի է կովկասահայերին խեղդել:

Ի գէպս է այստեղ յիշել որ Թրէզէն երեւոյթները ըմբռնելու անընդունակ է:

Տարիներ առաջ, երբ ինքը երեւանի նահանգապետ էր և Հայրիկը կաթողիկոս ցարձաւ, նա ամէն ճիգ թափեց Հայոց կաթողիկոսին վարկաբեկել. ու Հայրիկի լուծութիւնը քաջաբերվելով, հետեւեալ սրախօսութիւն էր արել իր խօսքը մի երկու իրեն ծածկող հայր ուղղելով. «Այժմ ձեր Հայրիկը մայրիկ ցարձաւ»:

Ու մի քանի տարի յետոյ, երբ առաջ կառավարութիւնը յափշտակեց հայ եկեղեցիներին հարստութիւնը. այդ մայրիկ ցարձակ Հայրիկը դիմադրեց, իր իրաւունքները պաշտպանեց ոչ միայն Թրէզէնի, Գալիցիաների, այլ և նախարարների և ծարր հանդէպ՝ ծերացած զառամած մայրիկը յանկարծակի վերածելով մի եռանդուն, աննկուն կորովի երիտասարդ Հայրիկի. և այդ հրաշագործ փոփոխութիւնը տեղի ունեցաւ շնորհիւ կովկասահայ ժողովրդի, որը իր ամբողջ ուժը գրեց ծեր կաթողիկոսի տրամադրութեան տակ:

Արգեօք այս անգամ էլ Թրէզէն այդպիսի մի սխալ համոզում չէ գոյացնում կովկասահայերի հանդէպ, կարծելով թէ անգլիացի թղթակցիցներին յայտնած անմիտ խօսքերը կարող են կովկասահայերին սարսափեցնել և իրենց արարական իրաւունքները, որոնք սեպարատիստական ոչ

մի բնոյթ չունին, պաշտպանելու տրամադրութիւններինց ետ կեցնել:

ՎԱՐԴՕ

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

ՃԵ.

Սուրբանը եւ մեր ցեղերը
 ԲՈՎ ԲՈՎԻ

— Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, մեր ըսածներու չեն հաւատար, վրանուն կը նետեն Սասնոյ նոր տաճարն պատասխանատուութիւնը, լա՛ւ. կեցէ՛ք մենք ատ դաշնակցականներուն աննկ փաստ մը ցոյց տանք, որ ուրիշ գալերին չի գիտանա:

Եւ հայ ժողովուրդին «իրաւունք»-ները! պաշտպանելու քօղին տակ՝ յեղափոխութեան ու յեղափոխականներու հասցէին ուղղուած փիս-փիս քիւֆրի «ձայններէն» կտրել, անոնք, համարական ժգիտը երեսին, յաղթական թոնով մը հայ ժողովուրդին կը հրամայեն, Վառնայի հայ-մէջլէրէթի թիւ 62-ով, Սուլթանին փաստերը ...

— Չեն հաւատար, հէ՛, կարհամարեն մեզ, բայց նայեցէ՛ք, լսեցէ՛ք մեզի, ժողովուրդ —

Բաղէշի վալին կառավարութեան զրկած է ռազմաթիւ թղթեր և յայտարարութիւններ ստորագրուած հայերէ և ապացուցանող յեղափոխական կազմակերպութիւն մը թէ Սասունցիք հնազանդելով Վահանին մեր ժամ են Առաքել վարդապետի ասալարկութիւնները, որոնց համեմատ անոնց կատարեալ ներում պիտի չընորհուէր եթէ հպատակէին»:

— Դեռ աւելին կայ, աղբար ...

«Վահանին զրկուած նամակի մը մէջ Հրայր փառաբանը կողմէ, որովհետեւ՝ կըսէ. «չարժու մը պէտք է ըս կեցել», և հոն երկարօրէն կը խօսի ապստամբութիւնը շարունակելու համար ձեռք առնուելիք միջոցներու մասին, աւելցնելով որ անհրաժեշտ է այրել գիւղերը»:

— Դեռ մտիկ ըրէք վալին ըսածները —

«Բաղէշի առաջնորդը, Մուշի պատ. փոխանորդը և այդ երկու քաղաքներու վարչական ժողովներու անդամները կը յայտարարեն թէ իրենց Շէնիկ գիւղը գտնուած ատենին ուր կըսպասէին Առաքել վ-ի խաղաղեցուցիչ պաշտօնի արդիւնքին, շարունակ հայերը հպատակութիւն պայմանագրելէ հետո, կը շարունակէին Սասունի

բարձունքներուն վրայ պատեղներ կանգնել և հոնկէ ցորքերու հետ ընդհարումներ սկսած էին. Աւրի թուրք թի մը մէջ Բաղէշի առաջնորդին փոխանորդ Վարդան վարդապետը և Չանլը վանքի վանահայրը կը հաստատեն թէ կէլիլուզանի բարձունքը քաշուած իրենց հայրենակիցները զօրաց վրայ կրակ ըրին»:

— Այս բոլոր վաւերաթուղթերը և հայերէնէ թուրքերէնէ թարգմանուելով զրկուած են զնսպաններուն և լրագրողներուն, տէ՛ր թող ի՞նչ Սասնոյ նոր դրամին մասին գաղափար մը կազմեն և պատմութեան առջեւ այդ մասին պատասխանատուութիւններ ճշտեն ... Ա՛լ ասկէ աւելի լաւ փաստ կըլլայ, աղբար, «էնտէքանտանս Պէլթ»-ը գրեր է և կառավարութեան զիւանատունէն ելեր է ... ալ ասոր ալ չի հաւատալ կըլլայ մի ...

Մարդ կ'ապշի. վայրկեան մը Սուլթանի ինքնարգարացումի փաստերը՝ ՀԱՅԵՐՈՒԻ ԿՈՂՄԷ հայերու հրամայեցելու. սա ոճրագործութեան առջեւ, որ դեռ իր մէջ տեսակ մը յաղթական թոն ալ կը պարունակէ:

Եւ վաւերաթուղթերու 1 մասին խորհելէ և տրամաբանելէ առաջ, ամէն զգացող հայ, իր զայրութիւնը մեղմացնելու համար կը թոյնէ նախ աս վատերու երեսին:

Ի՞նչ դիւային ոգի. ի՞նչ հրէշային սիրտ, ի՞նչ աղտոտ զգացումներ կան եղբր թագնուած աս հայ-թուրքերու մէջ, որոնք դաշնակցականներն ու յեղափոխական գործը հալածելու իրենց յիմար խոյանքին մէջ կուրցած, չեն խպնիր — Սուլթանին ինքզինք արդարայնելու փաստերը! յեղափոխութեան և յեղափոխականներուն զէժ իբրեւ զէնք գործածելու ...

Թո՛ւ ... վատե՛ր ...

Մենք չի տեսնաք դեռ աս մարդոց քով, շատ չէ, կաթիլ մը ազնուութիւն, որ անոնք Սասնոյ զգաղափարութիւններուն մասին օտար հայանպատակարծիքները մէջ բերէին և ժողովուրդին ցոյց տային:

Ուր որ թրքական աղբիւրէ բղխած և թրքական հաշիւներով և զգացումներով ցեխոտուած փիսութիւններ կային, ատ հայ ցեղերը անոնք զատեցին և ժողովուրդին հրամցուցին և դեռ կը հրամցեն:

«էնտէքանտանս Պէլթ»-ը հակահայկական կամ հակաչեղափոխական գրութիւնները հրամցնող հայ-Անիէտ Րիզաները, գոնէ խիղճն ալ չեն ըսնել նայելու, որ ատ թերթերը միշտ մեզի հակառակ կտորներ մէջ կը բերեն եւ դեռ քանի մը օր առաջ

էր որ այնքան հակառակ տողեր զե- տեղած էր ատ թերթը իր սիւնակ- ներուն մէջ, որ աւելորդ է հոս մէջ բերել:

Եւ ինչո՞ւ ատ աշխատութիւնը, երբ հայ վատերը գիտնալով է որ աս ամէնը կը գատեն եւ կը ցուցադրեն, որպէսզի ուժ տան իրենց ազգագաւ գործերուն:

Այլ վատութեան գերադրական աս- ախճանին հասած են հայ ժողովուրդի զին ատ ցեղերը, որոնք իրենց ստոր հայրենիքուն օգտին հասար թուր- քին ըսածները իբրեւ փայտ կը բե- րին:

Ինչո՞ւ քողի տակէ կը հաջեն, թող բացուին, քանի որ այլևս հե- առէն հոս քաղաքի ալ թուրքին հետ քով քովի են, երբ Սուլթանին փաստը իրենց ալ փաստն է, երբ աս- նոր ուզածը իրենց ալ ուզածն է, երբ անոր հաւատացնել ուզածը ի- րենց ալ փաստարանածն է:

Եւ արդեօք, հայ ժողովուրդին միտքին մտքը իսկապէս այնքան ցած մակարդակի վրայ կը գտնուի, որ թուրք դիւանատունէն ելած եւ հայ թերթերու կողմէ իրեն հրամցուած փաստերուն եւ փաստողներուն օգին, ճշմարտութիւնը, արժէքը չի հակ- նայ:

Ի՞նչ ալ զիստ է, մե՞զք ան ճիւղան ճանքով հարիչներուն, որոնք իրենց կեանքն են զրեր այլ ժողովուրդին անդրը:

Արդեօք, այնքան դասերէ ետքը, դեռ պէտք կ'ա՞յ կրկնելու ապացու- ցանելու թէ՛ «Հայերէ ստորագրու- ած թուղթերը՝ թուրքի մէջ լինելու ձեւով է որ կը ստորագրուին, եւ թէ՛ Մուշի վարդապետները, ժողովական- ներն ան ժողովուրդը, բոլորն ալ, ս'բքան ընդդէմութիւններէ ետքը, հայտնանքներուն տակ ստիպուած են ստորագրել «թուրքերու կողմէ իմ- քագրուած» ազ անպիտան թուղթե- րը եւ քան ալ ելած իրողութիւնը պատմած են շատ համեստ ոճով Պատ- րիարքարանին, որոնցմէ մէկուն պատճէնը տեսնեք «Իրօչակ» մէջ:

Արդեօք դեռ պէտք կ'ա՞յ կրկնելու թէ՛—թուրք կառավարութիւնն էր որ բանակցելու համար յեղափոխա- կանները մէջտեղ հաւաքեց եւ յար- ձակեցաւ անոնց վրայ:

Եւ յանցա՞ք է աս պարագանե- րուն տակ Հրայրի սիւնակովու ու- ղելը կամ «չարժուածը պէտք է սկը սել» գրելը, երբ Սասունը զօրքերով ու աշխրհներով լեցուած կրակը ա- ներ կը բռնկի, թողունք դեռ մէկ կողմ, ալ նամակները թուրք կա- ռավարութեան ձեռքէն ելած ըլլալու պարագան եւ խարդախուած ըլլալու հաւանականութիւնն ու թուականի եւ Բամանակի անյայտութիւնը:

Յանցա՞ք է եղբր կէտէ կիւղանի բարձունքէն հայրուն կրակ ընելը զօրքերուն վրայ, երբ հայերը կը հայտնուին թուրքերէն եւ ձեռք անց ուելու պարագային հում-հում պիտի ուտուին:

Բայց ինչո՞ւ համար ատոնց կրկ- նութիւնն եւ լուսարանութիւնը:

Կը բաւէ որ ատոնց ազդուրը թուրք կառավարութիւնն է: Ասի կը բաւէ անոր անճշտութիւնը ապա- ցուցանող:

Կը բաւէ որ, Սուլթանին փաս- տերն ու խօսքերն են — ըլլան նոյն իսկ ճիշդ—որ հայերու կողմէ կը գործածուին իբրեւ փաստ հայ յե- ղափոխութեան դէմ: Աս ալ կը բա- ւէ ցոյց տալու Սուլթանի հաւատա- րիմ հայ փաստարաններու անօրջ ղտխային ուրիշ ու գործը:

Եւ վստահ ըլլանք, որ թուրք կառավարութիւնը եւ անոր ի- րան թերթերը, մինչեւ հիմա շատոնց հայերու բերնէն ելած և թերթերով ու հրատարակ գրու- ած հակայեղափոխական քո- ռողներն ու Սուլթանի թափած արիւններուն նուիրուած արդա- րացումի հայ ճառերը՝ կը գոր- ձածեն իբրեւ փաստ եւրոպայի առջեւ, որոնք մեր ըմբոստացու- մը կարգարացնեն և արիւնները Սուլթանի վզի կը ընքցեն, ե- թէ վստահ չըլլան որ իրենց ստ- քայլերով հայ թուրք թերթերու գոյնը բարձրովին երեւան պիտի հանէին հայ ժողովուրդին մէջ գոյութիւն ունեցող ամենէն գե- րադրական ապուշներուն և հա- կայեղափոխականներուն աչքին առջեւ իսկ, որով պիտի զրկուէր

Սուլթանը հայ յեղափոխական ու- մերը շլատելու սահմանուած հայ թերթերէն, որոնցմէ ունենալու համար հաղարներով ոսկի պէտք է ծախսէ թշնամիրն:

Եւ իսկապէս, ո՞ր հայն է որ, ըլլայ նոյնիսկ ամենէն հակայե- ղափոխականը, պիտի յանձն առ- նէ ապէ՛ս ետք — եղբայր ըլլալ թուրքին:

Բայց ատ ոճբայորձ դերին մէջ են մեր խմբագիրներէն, ոմանք, իրաւունք պաշտպանելու գաւազ- րութեան մէջ իրենց ունայտը ձայներովը:

Տիրիպէ

ՃԱՌՈՒՑՈՒՄԻ ՄԸ ԿԱՐԿԻՔԸ ԳԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Օգապի Գիւլիո նախկին նախա- բար, այժմ երեսփոխան և թօ- քիօյի քաղաքապետ, ամենալուրջ թերթերէն միոյն մէջ պատերազմի ելիքն և ճամոնացիներու տրամադ- րութեան մասին հետեւեալ յօդուածը հրատարակեց է:

ԱՄԻՆՅԷ օրս մեր տարած յաղթու- թիւնները և թշնամու իրարու յա- ջորդող պարտութիւնները ապացու- ցեցին թէ ճարտար գիւնորները ի- րենց նմանը հոռին աշխարհի մէջ և ոչ ոք ալ չի կասկածի մեր վերջնական յաղթութեան մասին: Բայց արեւէն ալ պարզ է թէ Ռուսիան նոյն իսկ Բ. Արթուրն և Մուկաչին ալ կորցնելէն վերջը հաշտութիւն չի պիտի կամե- նայ. եթէ մինչեւ Սարբին և Բայքա- քալիտեւն ալ քննեք զայն, նորէն զենքերը վար դնելու ատրմէն կախ- ուած է: Եւ այնպէս որ շենք կրնար ոչ տեղը և ոչ ալ ժամանակը որոշել ձա- րան դափնիներով զարգարուած հան, գտնութեան:

Իսկ որ Մանջուրիան և արեւել- ան Սիբիրը Բուսական հսկային վերջին ծայրերն են, ուստի անկա- րող են Ռուսիոյ սրտին հասնել: Ու- րեմն պէտք է հաշտութիւնը այն մտքի հետ թէ պատերազմը անորոշ ժամա-

նակ մը պիտի շարունակուի: Այստեղ անհեղձ քորոզում պէտք է, Ասպիդ յաղթութիւններուն մեր ժողովուրդին օգեւորութիւնը ինքնութեան հասա- իսկ այժմ այդ կրակը շիջու և ժո- ղովուրդը կը դիւսէ անտարբերու- թեամբ:

Ինչո՞վ բացատրենք ոգեւորութեան այդ անկումը, եթէ ոչ միայն այն վատով թէ, հակառակ մեր բոլոր յա- ջորութիւններուն մեր ձեռքը չէ պա- տերազմին վերջ գնելու իշխանու- թիւնը:

Աս հասարակ յաղթողներն է որ այդ կորոզեն, սակայն այս պատերազմի մէջ իշխանութիւնը Ռուսիոյն պատկանի, ժողովուրդը այսօր այդ կը հասկնայ, բայց պէտք էր որ ան- լայի շուտով ըմբռնէր: Փոխանակ իսկ թերթն ու բարձրագու և աս- նելու, լաւ պիտի ընէր ժողովուրդը այդ մասին լրջօրէն մտածէր, Յամ- նայն դէպս ժողովուրդին այդ տրա- մադրութիւնը քաջալերելը վայել է մեծ ժողովուրդի մը:

Ենթադրենք թէ Ռուսիան հաշտու- թիւն չը պիտի ուզէ. կարելի չէ որ զայն հաւանեց մինչեւ հիւսիսային Մանջուրիա. Սիպերիա առանց մի- ուծեքը չարելու: Ատիկ անմիտ բան չի կրնար ըլլալ: Ենթադրենք յաղ- թութենէ մը վերջը պէտք է որ ընտ- րենք շատ լաւ դիւքեր, զորս թշն- մին չը կըրցու պահել և մենք կըր- նանք լաւ պաշտպանել: Այնտեղ կանգ կառնենք եւ ի զուր պիտի ըս- պասենք վհատած թշնամին:

Այդպիսով ձառնիւն ներսէն ա- զաւ, կրնայ մտածել իր հարստու- թիւնները բազմապատկելու մասին: Փոխանակ խաղաղ ժամանակ 250,000 զինուոր պահելու, թող անոնք գո- հուեն ան բազմակար կէտերուն վը բայ, զոր պիտի ընտրենք ձառնիւնի մէջ: Եւ այստեղ այնքան շատ չը պի- տի ըլլան: Այդպիսով շատ երկար տարիներ պիտի մնանք թշնամին հանդէպ: Այդ ձեւով մենք չը պիտի յոգնինք եւ վերջապէս Ռուսիա պի- տի հրաժարել Մայրաքաղաք Մոսկուի մասին ունեցած իր ծրագրերէն: Իմ կածիքովս Բորի Արթուրը, վլատիվոստօքը եւ Մուկաչինը գրա- սելով ու ուսանելով հիւ իս արեւմտ- եան Մանջուրիա քննելով մենք անոր

Ի Ն Ժ Ի Ն Ե Ը (2)

(Պատկեր Բարձր կեանքի)

— Մեք անհեղձ գնացել է չէ գնացել, մեր ինչ փոյթը, միջամտեց Բարու- թովը:

— Զորս այդ տեսակ խօսակցութիւն- ների ժամանակ չէ. թուղթը անհամ- բեր մեզ է սպասուած. նախ մի քիչ կողորդներս թրջենք, ետանդ ստա- նալու, համար:

Այդ խօսակցութիւնը ելեքարական հո- տանքի նման ցնցեղին հիւրերին, խմբից և թուղթը՝ դրանից ինչ հմա- յիջ բան կարող է լինել կապիտալի փոխանակումը և կենտրոնի համար:

Թողորն էլ վաղցիցն ծանրաբեռնը- ված սեղանի կողմը, գաւաթները վերցնելով, որը կոտնակ, որը գինի, որը վերջուտ, որը պարզ ուսուական զանցի արտոյ լեցնելով պարսպին ու արագութեամբ թղթախաղի սեղաննե- րը շրջապատեցին:

Հինգ վայրկեանի մէջ լուսութիւնը տիրեց: Լուսով էր միայն խաղաթղ:

Թերթի ցրվումի ձայները, կամ դեռ կամաց. մի աուրբի, երկուսն ար- տասանութիւնները: Սաքը դեռ չէր տաքացել. կրքերը դեռ չէին բոր- քեղվել, երկուսը համ չուէր. Բա- րութովը այդ նկատեց և իբր լաւ հիւրասէր ասանէր տեղիցը կանգնե- լով յայտարարեց:

— Ճգնեք, լաւ չի գնում. կամաց է, կամաց, ետանդ չէ երեւում, կար- ձեմ լաւ կը լինի միանգամ էլ սեղա- նին այցելութիւն ասանք: Ես չեմ սի- րում այս տեսակ լուսութիւնը. կարծես թէ զօրով հաւաքված լինենք: Այս- պէս լուս. նստելուց յետոյ՝ աւելի լաւ կը լինէր ամեն մարդ իր տանը նստելը. էլ օ՞ր էինք հաւաքվում. Դէ՛ ձեզ տեսնեմ, խմեցէք, կերէք, և խա- ղացէք:

Այդ խօսակցութիւնը դեռ չէին վերջացել, երբ արանի դուռը բացվեց. ներս մը- րաւ մի ծոտ 40 տարեկան, բարձրա- հասակ առս տիկին, բարձրաձայն ծիծաղելով, ընդհանուր բարեւ տա- լուց յետոյ՝ խօսեքը ուղղեց Բարու- թովին:

— Ինչ լաւ ճառ ասող էք եղբւ:

կարծես թէ ճգնածամային վայրկեան- ներում վնասված զօրքն զէպի պա- տերազմ հրաւիրող զօրավոր լինէք: Բայց ես ինչպէս տեսնում եմ մեր զօր- քը վնասվողներէ չէ:

Ընդհանուր, խանդալաւ ծիծաղը պատասխան եղաւ ուս տիկնոջ խօս- քերին, իսկ հիւրերից մին, մի ծրթ- ուած, մաշված պարն, վրաբերեց:

— Օհ, Իւլիա Իվանովնա, ամենից լաւ ետանդ ներշնչող զօրավարը դուք էք. այժմ խմելու էլ պէտք չը կայ. բաւական է որ թղթերը մեր ձեռքում լինեն և բանկ բռնողը դուք լինէք: Կենդանութիւնը, ետանդը, կրակը կեանքը այնքան կը զօրեղանայ, որ մեզ այլևս ստնձահարել կարելի չի լինի, Դէ նստեցէք. մեր տեղը ար- դէն պատրաստ է. բանկ բռնողը ես էի բայց ձեզ կը գլխեմ:

— Ոչ, ոչ, միջամտեց Բարութի- վը. աւելի լաւ է որ Իւլիա Իվանովնան էլ եկաւ. նա հիմա տան տիկնոջ դի- կը կատարեց, մեզ բողբոխ էլ սեղանի մօտ կը հրասիրէ ու մեզ հետ միասին մի բաժակ կը պարպէ: Իւլիա Իվանովնան գլխի թեթեւ

չարժուով Բարութովին շնորհակա- լութիւն յայտնեց այդ պատի համար և նրա թեւը մտնելով բողբոխ սեղա- նի մօտ հրաւիրեց:

Բաժակները մի անկումով մէջ լց- վեցին և կեցցէ Իւլիա Իվանովնան, ա- ղաղակներով պարպուցին:

Իւլիա Իվանովնան, բուն Մոսկովա- ցի էր, ու հարուստ վաճառականի աղ- լիկ, նա իր քստն տարեկան հաս- կում լինելով առաջնակարգ գեղեց- կուհի, գիմնազում աւարտած և մեծ դրամով լի մի օրիորդ, գրաւել էր անսկզպան և գրեթէ ձեռքացած մի անուականի սիրտը, ու ինքն էլ հը- րապուրովով նրա տիտղոսից, որը ըրտ ամուսնու պատմութեան ուսա- կան հին իշխող Բիւրիկներէր էր սեր- բում, ամուսնացել նրա հետ. աս- մուսնանալուց երկու տարի վերջը իւր քայքայված ամուսնու հետ կողմն- եան հանքային ջրերը գալով, խեղձ- ձերուկին, մեծ հաճութեամբ այնտեղ թաղել էր, Երիտասարդ որբեայրի- ութիւն ասանին բուրեան օրե- րում ծանօթանալով մի երիտասարդ սեւ աչեայ կայտառ հայ միլիոնատէր

նորհակալիքը յայտնել «ճար-
ժումի խմբագրութեան և մաս-
նաւորապէս Պ. Վարդօրին, որ խմ-
բագրութեան յատուկ թերթերը
և հանդէսները նորոգել է ընթեր-
ցարանիս :

Վարչութեան կողմէ
Գ. Կեզեան Պ. Մրապեան
(Կնիք)

Ա. Զ. Գ.

Ըստ մեր յայտարարութեան,
հինգշաբթի երեկոյ ժողով պիտի ու-
նենայինք Ազգ. վարժարանի մէջ,
բայց դժբաղդաբար գիշեր ըլլալուն
համար վարժարանին ղոնները գոց էին
ըստ հոգաբարձութեան որոշումին :

Հետեւաբար ժողովը պիտի գումար-
ուի վաղը կիրակի կէս օրէն յետոյ
ճիշդ ժամը 2-ին դարձեալ Ազգ. վար-
ժարանին մէջ, Ուստի կը խնդրենք
մեր անդամներէն որ ներկայ գտնը-
ուին որոշեալ ժամուն :

Վարչութիւն
Սիսակ. Սանուց ընկերութեան
Ատենադպիր Ատենապետ
Ազ. Ասլանեան Մ. Ենովեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն 15 սեպտեմբերին Վի-
էննա կը հեռագրեն թէ ուստիոյ
գնսպանը շարունակ Բ. Դանէն կը
պահանջէ ուս-թրքական պատե-
րազմին պատճառով ուսնահպա-
տակներուն եղած ֆլաւաններուն
հատուցումը : Վախ կայ թէ ու-
սիա նաւային ցոյց մը պիտի ընէ :
— Պոլսէն կը հեռագրեն թէ
յունական հրոսախումբ մը գերած է
թուրք սպայ մը : Թուրք զին-
ւորները հրոսախումբը կը հետա-
պնդեն :

— Պոլսէն նոյն թուականին կը
հեռագրեն թէ՛ ուս-թրքական
սահմանագիւղէն ուս-խաղախներ
թուրքիոյ հողը անցած են և
թուրք զինուորները զանոնք հայ
հրոսախումբի տեղ ընդունելով
յարձակում գործեր են և 7 հոգի
սպաններ են :

Ռուս զեպանը խտուր բողոքած
է Բ. Դրան, և վերջինս ալ պատ-
ւիրած է խիտ քննութիւն կա-
տարել :

— Զմիռնիոյ մէջ ժանտախտի
6 դէպք հաստատուեր է :

— «Բ. Բորէսը» թերթը կի-
մանայ թէ Սուլթան Մուրատի
մահաւնէն վերջը Զէրիկան պա-
լատի ամբողջ մարդիկը ցրած
են : Մտաայողներէն մէկ քանին
զրկված են հին պալատը, իսկ
մնացածը քարոյր :

ՌՈՒՍԻԱ

Բաղու և Սարատով քաղաքնե-
րուն մէջ խօսերայ կայ : Բաբուի
մէջ 67 հիւանդացոյններէն 38ը
մեռած են :

— Պոլսէն սեպտ. 15 Վիէննա
կը հեռագրեն թէ անգլիական
գնսպանաւորներ իմացել են որ Ռու-
սիոյ սեւ. ծովեան նաւատորմիցը
յանկարծակի Սեւաստօօլէն մեկ-
նեք է անյայտ սեղ. մը : Անգլիա-
կան զեպանաւորներ անմիջապէս
այդ յուրը հաղորդել է Ռ. Դրան :
Սուլթանը իսկոյն արտակարգ
գազանի ժողով մը կը գումարէ
պալատին մէջ ու որոշումներ տա-
լով իսկոյն կը հեռագրուի թուր-
քական բոլոր նաւահանգիստնե-
րը :

— Օսէսայի քաղաքացիտի
կեանքի դէմ փորձ ընողը յայտա-
բարեր է որ ինք քաղաքացիտը
չի ճանչնար և միտք չունէր քա-
ղաքական սպաննութիւն կատա-
րել :

— Ռուսները կը կասկածին թէ
ձմեռը պիտի կարենան պատե-
րազմիլ որովհետեւ Մանջուրիա-
ցիները պատերազմի պատճառով
այս տարի ցանք չէին ըրած և
պաշար չը կայ :

— Բեթերսպուրկէն կը հեռագ-
րեն թէ ուս հեռագրական գոր-
ծակալութիւնը տեղեկացած է որ
Սախալինի քովերը թմբանօթ-
ներու որոտումներ լուսեր են սեպ-
13ին և հաւանական է թէ հոն
պատերազմ տեղի կունենայ :

— Վարչապէսէն կը հաղորդեն
որ 30 նոր թիշկներ այդ քաղա-
քէն մեկնեք են դէպի Մանջու-
րիա :

— Նեմերովիչ Տանչենկօն բա-
նակատեղիէն արտաքսված չէ.
ինքնաբերաբար Խարպին մեկնած
է իրեն հաւաքած գրական նի-
թերը կարգաւորելու համար :

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Զիֆուէն անգլիական թերթե-
րուն կը հաղորդեն թէ հոն հասած
ճարտարները Թախուշանի կողմէն
յարձակիլ սկսեք են Բորթ-Ար-
թուրին վրա. ու շատ օրուան կը-
ռիւէ վերջը, տիրապետեր են
թիւ 4, 5, 6 ամբուլթիւնները :

Օրու գիշեր եւանգուն յարձա-
կումը կը շարունակուի. ուսաց
զօրքի մեծ մասը ինկեր է ճար-
նական խաչածեւ ուժակոծումին
տակ :

— Բեթերսպուրկէն Պերլին կը
հեռագրեն թէ կոմս Լամտորֆ,
նշանաւոր գիւանդէտի մը խօ-
սած ատեն յայտարարած է որ
հաշտութեան մասին ուել է խօսք
չի կրնար ըլլալ. պատերազմը
պիտի շարունակուի մինչեւ որ
Ռուսիան բոլորովին յաղթէ. ա-
տոր համար է որ Գրինպերկ հրա-
մանատար կարգուած և երկրորդ
զօրաբանակը ստեղծուած է :

— Բեթերսպուրկի մէջ ամեն
ժամ Բորթ-Արթուրէն տեղեկու-
թիւն կապառուին Ռուսական նա-

ւատորմիդին դուրս ելլալուն և
Վլադիվաթօք երթալու մասին :

— Բէթերէն Լօնտօն կը հեռա-
գրեն թէ ուսները ճարտական
կառավարութենէն խնդրած են
որ թոյլ տրուի բժշկական զեպեր
ներս տանին Բորթ-Արթուր. ճա-
րտագիտները մերժած են, որով-
հետեւ այդ խնդիրը չի համաձայ-
նիր պաշարման պայմաններուն :

— Բեթերսպուրկէն Պեր. Թա-
զըլը կը հաղորդեն որ մինչեւ
օրս ուսները կուրի գաշտ զրկած
են 478 հազար ձմրան տաք ըզ-
գեստներ, և 160 հազար ալ տաք
կօշիկներ : Երեք շաբաթէն այդ
իրերը Մանջուրիա պիտի հաս-
նին :

— Մուկոսեն Լօնտօն կը հե-
ռագրեն թէ ճարտարները կը
յառաջանան երեք ուղղութեամբ.
Գուրօքի զօրաբանակին արեւ-
ելեան թեւը հասած է Տանա-
բուցա. Օթուր արեւմտեան թեւը
ճանթան, իսկ Նոտզուրի հարա-
ւային թեւը Շէլիտ :

— Զիֆուէն Պերլինի թերթի
մը կը հեռագրեն թէ այնտեղի
ճարտական փոխ հրապատօր կը
հերքէ ուսներուն տարածած լու-
րը, որով կիսացուեր թէ Բորթ-Ար-
թուրի արեւմտեան կողմէն յար-
ձակումը սկսուած է :

— Բեթերսպուրկէն Բարիզ կը
հեռագրեն թէ ծովային նախա-
բարութեան ստացած տեղեկու-
թիւններուն համաձայն թորփի-
լանաւ Իէշիտէլին չի կրնար
հասնիլ ճարտական ծովային
ժահմանները : Իէշիտէլին ճամ-
բան ընկղմած է :

— Բեթերսպուրկէն Պերլին զը-
կուած հեռագրի մը համաձայն
պատերազմը Ռուսիոյ վրայ օրա-
կան 2 ու կէս միլիոն սուպլիի կը
նստի :

— Լօնտօնէն կը հաղորդեն որ
վերջին տեղեկութիւններու հա-
մաձայն Բորթ-Արթուրին պաշա-
րումը այնքան լաւ կատարուած է,
որ վերջին յարձակումներու մա-
սին Բորթ-Արթուրէն ոչ մէկ տե-
ղեկութիւն կարելի է ստանալ :

Նաւատորմիցը կողմէ դուրս
փախիլ. սակէ կը հասկցուի թէ
ուսներուն վիճակը շատ զէջ է.
Մեծ յոյսեր կը գրուին ամիրալ
Վերէնի վրայ. ան հրամայած է
կամ դուրս ելլալ, կամ նաեւրը
ընկղմել :

— 14 սեպ. Մոսն. բոսթա թեր-
թին Շանխայէն կը հաղորդեն թէ
Բորթ-Արթուրի ուսական նաւա-
տորմիցի կացութիւնը ճգնաժա-
մային է. որովհետեւ ճարտա-
ցիները ամէն օր կը ուժակոծեն.
Կըսուի թէ ճարտարները նոր
երկու ամբուլթիւններ գրաւեր են :

— «Թալմա» թերթը կը յայտնէ
թէ չինացի ապստամբական երեք
պետեր 90,000 մարդ հաւաքեք
են Մուկոսէնի հիւսիսային կող-

մը ուսաց նահանջը արգիլելու
համար :

— Ծարւանցի հրամանատարը
կրկին մարդ ուղարկած է Շի-
սէլէ առաջարկելով որ Բորթ-Ար-
թուրը յանձնուի :

Շիսէլ պատասխանած է. այս-
տեստեւ տատնի առաջարկու-
թիւն մը բերողին իսկոյն հրա-
ցանի կը բռնեմա :

— Բեթերսպուրկէն կը հաղոր-
դեն-Ալէքսան Ծարին հեռագրած
է թէ Բորթ-Արթուրի մէջ գրու-
նուող ֆրանսական մեծ լծու-
նօթիւրը բանի մը պէտքը չէն :

ՍԵՐՊԻԱ

Սերպ կառավարութիւնը հե-
տեւալ յայտարարութիւնը ըրած
է :

Քանի մը թերթեր կուզեն մե-
զագրել Պուլկարիան մեր Մակի
գոնիոյ եղբայրները սպաննելու
մէջ :

Իրապէս պուլկար կառավարու-
թիւնը և ժողովուրդը այնքան
մեղաւոր են այդ սպաննութիւն-
ներուն մէջ, որչափ սերպ կա-
ռավարութիւնը և Մակիգոնիոյ
սերպ ժողովուրդը. մակիգոնու-
կան առանձին կազմակերպու-
թիւններ, որոնք ոչ Պուլկարիոյ
և ոչ ալ Սերպիոյ մէջ պաշտա-
նութիւն չեն գտեր, կորսնցու-
ցած են իրենց յեղափոխական
չանկութիւնը, որովհետեւ փե-
րածուած են աւազակային խում-
բերու : Այդ խումբերուն անդա-
ները հայրենասէրներ չեն, ո-
րոնք կը կուրին հայրենիքի ա-
զատութեան համար, այլ սովոր-
ական աւազակներ, իրենց վար-
մունքով և նշանաբանով, սինք-
նավարութիւն Մակիգոնիոյ հա-
մարս անոնք կը պատրաստեն
Մակիգոնիոյ գրաւումը կամ թէ
գժուարութիւններ որոնց հետեւ-
անքը նախագուշակելը գժուա-
րին է :

Այդ տեսակ գժուարութիւններ
իրապէս պիտի ծագին, և թէ պուլ-
կարական կոչուած հրոսախումբ-
րուն միանան և սերպական և
յունականները նոյն նպատակով :

Կառավարութիւնը կը դատա-
պայտէ այդ կասկածելի ապրու-
տամբներու վարմունքը և կը
յայտարարէ որ ան աջակցու-
թեամբ Պուլկար և բարենորոգիչ
կառավարութիւններու միջոցներ
պիտի գտնան այդ շարագործու-
թիւններուն առջեւ բռնելու :

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна